



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎/0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020թ.

«Թերթ էյ էմ» կայքի լրագրող Արփինե Հախվերդյանին
հեռ. 093 41 02 21, էլ փոստ arpinehakhverdyan94@gmail.com

Ձեր 27.07.2020թ հարցմանը

Հարգելի Ա. Հախվերդյան

Տեղեկացնում ենք, որ Լոռու մարզում շինարարական աշխատանքներում ներգրավվելու համար Լոռու մարզպետարան դիմել է կորոնավիրուսի համավարակի պատճառով արտագնա աշխատանքի չմեկնած 1496 քաղաքացի: Նրանց տվյալները մարզպետի պաշտոնական գրությամբ տրամադրվել են մարզի համայնքների ղեկավարներին և շինարարական կազմակերպություններին՝ կապիտալ շինաշխատանքներում, սուբվենցիոն, ինչպես նաև այլ ֆինանսական միջոցներով իրականացվող աշխատանքներում ներգրավվելու համար: Այդ ցանկը թարմացվում է երկշաբաթյա պարբերականությամբ:

Մարզպետարանի կողմից նաև պարբերաբար մոնիտորինգ է իրականացվում՝ տեղեկանալու, թե նրանցից քանիսն են տեղավորվել աշխատանքի:

31.08.2020թ. դրությամբ մարզում շինաշխատանքներ իրականացնող (այդ թվում սուբվենցիոն ծրագրերով) թվով 10 շինարարական կազմակերպություններում նրանցից աշխատանքի է անցել 150 քաղաքացի: Շուրջ 60 քաղաքացու ևս շինկազմակերպությունների կողմից աշխատանք է առաջարկվել, սակայն պայմանները չբավարարելու հիմքով (աշխատանքի բնույթը, բնակավայրը) նրանք հրաժարվել են:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ մարզում այս տարի սուբվենցիոն միջոցներով իրականացվելիք 98 ծրագրերից շինարարական աշխատանքներ ենթադրող շուրջ 60-ի մեկնարկը դեռևս տրված չէ, հետևաբար մեկնարկի դեպքում աշխատանքներում ներգրավվելու լրացուցիչ հնարավորություն կստեղծվի:

Արտագնա աշխատանքի չմեկնածները հիմնականում ներգրավվել են ճանապարհաշինական և քաղաքաշինական տարաբնույթ աշխատանքներում:

Նրանց աշխատավարձի չափը մինչև 250 հազար դրամ է:

Արտագնա աշխատանքի չմեկնած քաղաքացիների զբաղվածության խնդիրը գտնվում է մեր անմիջական հսկողության ներքո:

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ